ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 06 -Ա

ք.Արտաշատ

08 հունվար 2026թ.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի, օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ, 12-րդ և 15-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել 2026 թվականի հունվարի 12-ին ժամը 11:00-ին՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Մարմարաշենի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթը կազմակերպել մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում, մրցույթի արդյունքները ներկայացնել մարզպետին:

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2026 թ. ----------
N ---------- որոշման

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Սուսաննա Կտրակյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Կոստանյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Լեոնիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ,

Հայկ Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,

Մարիամ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Արարատ» մասնաճյուղի տնօրեն,

Արտակ Գրիգորյան - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ,

Մարգարիտ Մարգարյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ